

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Դիանա Հովակիմյան՝ ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության առաջին կարգի մասնագետ

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Լայպցիգ (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն), մարտի 14-20-ը, 2018 թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

- Մասնակցություն Լայպցիգի գրքի միջազգային տոնավաճառին:

Ս. թ. մարտի 14-20-ը մեկնեցի Լայպցիգ՝ մասնակցելու Լայպցիգի գրքի տոնավաճառին, որտեղ Հայաստանը ներկայացված էր առանձին տաղավարով: Նույն ժամկետներին Լայպցիգ գործուղվեց նաև նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության փորձագետ Արմեն Սարգսյանը:

Լայպցիգյան ցուցահանդեսի հայկական տաղավարը ներկայացնում էր «Armenian Literature in Translations» (Հայ գրականությունը թարգմանություններում) գրանտային ծրագիրը: Ծրագրով աջակցություն է տրվում արտասահմանյան այն հրատարակչություններին, որոնք պատրաստ են իրենց երկրում իրենց լեզվով հրատարակել հայ դասական կամ ժամանակակից գրականություն: Դրամաշնորհային ծրագրին դիմելու պայմանների, ընթացակարգի և այլնի մասին արտասահմանյան հրատարակչություններին համակողմանի տեղեկատվություն տրամադրելու համար

ստղծվել է «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը ներկայացնող կայքէջ (<http://www.armlit.am>):

Լայպցիգի՝ գրական աշխարհում ամենահեղինակավոր և ծավալով մեծ տոնավաճառին Հայաստանի մասնակցությունն այս տարի ընդառաջ է Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյա և Էրեբունի-Երևանի 2800-ամյա հորեյաններին: Ուստի հայկական տաղավարը ներկայացավ ինչպես ՀՀ մշակույթի նախարարության պատվերով ու աջակցությամբ, այնպես էլ մասնավոր հրատարակչությունների նախաձեռնությամբ վերջին տարիներին Հայաստանում և արտերկրում հրատարակված Հայաստանի պատմությունը և մշակույթը ներկայացնող գեղարվեստական, մանկապատանեկան և այբոմային, ինչպես նաև թեմատիկ այլ գրականությամբ:

Մարտի 15-ին հանդիպում ունեցա Լայպցիգի գրքի տոնավաճառի տնօրեն Օլիվեր Զիլիի հետ, որի ընթացքում քննարկվեցին նշյալ տոնավաճառին Հայաստանի հետագա մասնակցության մանրամասները:

Լյապցիգ գործուղման ընթացքում կայացան մի շարք հանդիպումներ գրական-թարգմանական ծրագրեր ունեցող տարբեր երկրների ներկայացուցիչների հետ (Լիտվա, Չեխիա, Թաթարստան, Գերմանիա և այլն): Պայմանավորվածություն ձեռք բերվեց քայլեր ձեռնարկել միմյանց թարգմանական ծրագրերի վերաբերյալ տեղեկացման ուղղությամբ: Մասնավորապես՝ առաջիկայում Երևանյան գրքի փառատոնի ընթացքում այդ երկրների դեսպանությունների մասնակցությամբ կներկայացվեն իրենց լեզուներից հայերեն թարգմանությանն օժանդակող ծրագրերը, իսկ այդ երկրների հիմնադրամներն էլ իրենց հրատարակիչներին կտեղեկացնեն հայերենից այլ լեզուների թարգմանության օժանդակության վերաբերյալ գոյություն ունեցող գրանտային ծրագրի մասին:

Մարտի 16-ին հայաստանյան տաղավար այցելեց Գերմանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը: Վերջինիս ներկայացրինք

մշակույթի նախարարության «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը: Դեսպանն առաջարկեց քայլեր ձեռնարկել ծրագիրը Գերմանիայում տարածելու և թարգմանիչներ գտնելու ուղղությամբ:

Նույն օրը երեկոյան հայաստանյան տաղավար այցելեց նաև ռումինահայ գրող Վարուժան Ոսկանյանը, ով նվիրեց իր «Շշուկների մատյան» ստեղծագործությունը՝ օտարերկրյա ընթերցողներին ներկայացնելու համար:

Մարտի 18-ին՝ ցուցահանդեսի փակման օրը, հանդիպեցինք Լայպցիգ քաղաքի գրքի ցուցահանդեսի ղեկավարի տեղակալ տիկին Քեշթին Գրունների հետ, որի ընթացքում քննարկվեցին 2019 թ. Լայպցիգի գրքի տոնավաճառին գերմանալեզու գրականությամբ ներկայանալու, ինչպես նաև տեղական գործընկերներ գտնելու հարցը:

Մարտի 19-ին իրականացրինք հայկական տաղավարի զետեղման աշխատանքները, որից հետո հանդիպում ունեցանք Լայպցիգի հայկական համայնքի հետ և նվիրեցինք հայալեզու գրականություն:

Մարտի 20-ին կրկին հանդիպում ունեցանք Գերմանիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի հետ՝ ամփոփելու Լայպցիգի գրքի տոնավաճառին Հայաստանի անդրանիկ մասնակցությունը, ինչպես նաև քննարկելու հոկտեմբեր ամսին կայանալիք Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառին ներկայանալու ձևաչափը: Հանդիպման ավարտին դեսպանությանը հանձնեցինք մեկ արկղ հայալեզու գրականություն:

• ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Մասնակցություն Լայպցիգի գրքի տոնավաճառին:
- ՀՀ մշակույթի նախարարության «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի փարածում:
- Փոխգործակցության պայմանավորվածություններ փարբեր երկրների թարգմանական դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունների հետ՝
- Հանդիպումներ Լայպցիգի գրքի տոնավաճառի փնտրիչության հետ:

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի
արտաքին կապերի վարչության
առաջին կարգի մասնագետ՝

Դիանա Հովակիմյան
